

Չողութեան համար Եղիազար նիւթական միջոցներն ունէր, Երուսաղէմի մէջ գտած թաքուն գանձն ալ մէջ ըլլալով. Երուսաղէմն ալ պատրաստած էր արդէն էջմիածնի խորհրդաւոր անունով մատուռը շինած ատեն: Հայ Ազգը շուտով կրնար գրաւել՝ նուիրակներու հանգանակութիւնները և կեղեքումները պատճառելով և ձրի միւսոն բաշխելով: Կառավարութեան հովանաւորութիւնն ալ դիւրին էր ստանալ՝ Պարսկաստանի հետ յարաբերութիւնները վերջացնելու փաստով: Կը մնար եկեղեցական օրինաւորութեան ձեւակերպութիւնը. այս ալ պիտի լրացուէր ճանչցուած կաթողիկոսէ մը օժուժ ընդունելով, և այդ էր Եղիազարի Խաչատուրէ խնդրած աջակցութիւնը: Խաչատուր համոզուեցաւ, քանի որ իրեն վնաս պիտի չհասնէր և էջմիածին պիտի տկարանար... Կը մնար օրն ու տեղը որոշել, զոր Եղիազար պիտի պատրաստէր. և Խաչատուր խոստացաւ անոր կոչին պատասխանել և օժուժը կատարել...» (3):

Եղիազար՝ իր գործին յաջողութեան համար մեծագումար դրամ հաւաքելով, Կ. Պոլիս կը մեկնի. հոն իրեն ներկայացուցիչ կը թողու Յովսէփ Ամանոզլու Ռոտոսդոցի վարդապետը. և Սեմլինի մէջ կը տեսակցի Քէոբրիւլիոզլու մեծ Եպարքոսին հետ (Մարտ 1664), անոր սեղանաւո-